

Ամենայն սէտք ինքնապարտի
Աստուծոյն օրհնէ և խնայ
Առաքելական Եկեղեցւոյն օրհնէ և խնայ

Տարեկան գինն է Կանխիկ շէշ 120
Դոնորներէն Բաժանորդ Եղբայր-
քն Գոսպայի ծախքը վճարելու էն:

ՀԱՆԴԻՍ ՈՒԹՕՐԵԼՅՈՒՆ

23 ՆՈՅԵՄԲԵՐ

Ք. ՏԱՐԻ 1861

ԹԻՒ 9

ԱՓՐԻԿԷՒ ԿՐԱՅ

ԱՀԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ամենէն առաջ Ափրիկէի հին և նոր աշխարհագրական բաժանմանը վրայ խօսինք: Պէտք է գիտնալ որ մէկը պատմութի մը այնչափ աւելի զիւրաւ կը սորվի, յստակ կը դառնայ և յիշողութեան մէջ աղէկ կըրնայ պահել, որչափ տեղերուն աշխարհագրական բաժանմանը տեղեակ է: Տեղերուն աշխարհագրական դրիցն աղէկ տեղեակ ըլլալու համար ալ աշխարհագրական բաժանումներուն խնամով միտ դնելու է:

Հիներն Ափրիկէ, որ ըստ Յունաց Վիբիա կ'ըսուէր, ըսելով երեք բան կ'իմանային. 1. Աշխարհիս ան մեծ բաժանումներէն մէկը որուն մէջ ալ Ափրիկէ կ'ըսենք, որչափ որ անոնց ծանօթ էր. քանզի հիներն Ափրիկէի վրայ մեծ շատրիչ ծանօթութիւն ունէին: 2. Արիմանային Հռովմայեցւոց պետութե մէկ թեմը որն որ կը պարունակէր Սիդիֆեան և Կեսարեն Մաւրիտանիան, Նումիտիան, Բուն Ափրիկէն և Դրիփոլիան: 3. Ափրիկէ ըսելով կ'իմանային Բուն կամ Անթիհիւպատոսական Ափրիկէն. աս Ափրիկէն թեմ կոչուած Ափրիկէն զատ գաւառ մըն էր. որն որ Սիրիկոչուած խորշէն սկսելով մինչև Հէրմէու մի գլուխը կ'երթար. այսինքն այսօրուան Թունիսի և Դրիփոլի (Թունուս և Թարապուլուս) մասը: Բուն կամ Անթիհիւպատոսական Ափրիկէն գլխաւոր քաղաքն էր Ու-

ղիգան և ժամանակ մ'ալ Բ. Կարթեգոնը: Ըս ընդհանուր ծանօթութենէն կը տեսնուի որ 2 և 3 մաքով Ափրիկէ կոչածը մեր Ափրիկէին հիւսիսային մասն էր. այսինքն Մաւրիտանիան, Նումիտիան, Բուն Ափրիկէն և Դրիփոլիան: Ասոնք ամենը մէկէն Հռովմայեցւոց վերաբերութիւն ունեցան. անոր համար ալ թեմ և հիպատոսութիւն կոչուեցան:

Հռովմայեցիք իրենց երկիրներուն ատեն ատեն այլ և այլ բաժանումներ տուին. ընդհանրապէս Հռովմայեցւոց երկիրները կը բաժնուէին Նախարարութի (իբէֆէթի-ր), Թեմ (պիօն-ը) և Գաւառ (իքսպէնս) կոտանդիանսէն ետքը աս բաժանումն երթալով կանոնադրեցաւ, այնպէս որ Թեմ Թոսին կայսրութիւն կամ Գ. դարուն վերջը Հռովմայեցւոց պետութիւնը հետեւեալ կերպով կը բաժնուէր: Չորս Նախարարութիւն կար. Գաղատիա, Իտալիա, Իլլիրիա և Արևելք: Աս նախագահութիւններն ալ այլևայլ թեմերու, և թեմերն ալ այլևայլ գաւառներու կը բաժնուէին. ուրոնց վերակացուները կը կոչուէին Հիւպատոս, Անթիհիւպատոս և նախագահ:

Իտալիոյ նախարարութիւնը կը բաժնուէր 5 թեմ, որոց երկուքն Ափրիկէի մէջ էր. այսինքն Բուն Ափրիկէն որ Անթիհիւպատոսութիւն (իքսպատի-լա) էր, և թեմ Ափրիկէն որն որ հինգ գաւառ կը բաժնուէր. 1. Պիզակէն, գլխաւոր քաղաք Պիզակիոն, 2. Նումիտիա, գլխաւոր քաղաք Կոստանդին և Հիպպոնա, 3. Դրիփոլիան, գլխաւոր քաղաք Դրիպոլիս, 4. Առաջին Մաւրիտանիա, գլխաւոր քաղաք

Ալժէր, և 5. Երկրորդ Մաւրիտանիա : Նախ Ափրիկէի առ մասերուն վրայ խօսինք, և ապա մնացած մասերուն վրայ :

1. Մաւրիտանիա . Մաւրիտանիան հիւսիսային Ափրիկէին արեւմտեան մասն էր, Ադրանտեան ուխիրանոսէն մինչև Մոլոքաթ կամ Մալվա գետը որն որ Մաւրիտանիան Նումիտիայէն կը բաժնէր : Մաւրիտանիան կը պարունակէր հիմակուան Սիտի Հէշամի տէրութիւնը, Մարոքքոյի և Ֆէզի միացեալ Թագաւորութիւնները : Բայց Հռոմայեցիք կայսերաց ժամանակը Մաւրիտանիոյ սահմանը արեւելքէն ընդարձակելով Մալվա գետէն ասդին բաւական մաս մ'ալ մէջ առին, ուստի Հռոմայեցւոց Մաւրիտանիան հիմակուան Ալժէրին մէկ մասն ալ մինչև Կոստանդին կը պարունակէր : Նախ Մաւրիտանիան արեւելեան և արեւմտեան Մաւրիտանիա կը բաժնուէր :

Կողմիտի ժամանակ երբոր Հռոմայեցւոց զաւառ եղաւ, արեւմտեան Մաւրիտանիան Գինկիսեան Մաւրիտանիա կոչուեցաւ, իսկ արեւելեանը երկու բաժնուելով Կեսարեան և Սիդիֆեան Մաւրիտանիա ըսուեցաւ : Ասոնց գլխաւոր քաղաքներն էին Գինկիս, Կեսարէա և Սիդիֆի : Ինչպէս վերն ընինք, Կոստանդիանոսէն ետքը երբոր Հռոմայեցւոց պետութիւնը Թեմերու բաժնուեցաւ, Կեսարեան և Սիդիֆեան Մաւրիտանիան իտալիոյ նախարարութեան մէջ Ափրիկէ Թեմին մէկ գաւառն եղաւ : Իսկ Գինկիսեան Մաւրիտանիան Գաղատիոյ նախարարութեան մէջ Հիսպանիա կոչուած Թեմին մէկ գաւառն եղաւ : ուստի ան ատենէն սկսեալ Սոլանիա հիւսիսային Ափրիկէի ամենէն արեւմտեան մասին հետ, իբրեւ մէկ նախարարութիւն, սերտ կապակցութիւն ունենալու սկսաւ :

Մաւրիտանիա, Թէպէտ բերրի ու բարեղիր էր, բայց հարուստ երկիր մը չէ, և քաղաքակրթութեան մէջ ալ շատ ետ մը ապրած էր : Մինակ Միշերկրական ծովուն եղերքը շատ քաղաքներ ունէր. ներսերը, հիմակուան պէս, վայրենի ցեղեր կը բնակէին որոնք գրեթէ անկախ էին : Մաւրիտանիան, խիստ հին ատեններէ ի վեր, յատուկ Թագաւորներ ունեցած է. բայց

այս երկրին պատմութիւնը Յուգուրթի պատերազմի ժամանակէն, այսինքն Քրիստոնէական Թուականէն 100 տարի առաջ, կը սկսի մեղի ծանօթ ըլլալ : Քանզի Հռոմայեցիք հարկւր քսան տարի պատերազմելով 146 ին (Նխ. ք. զ.Ք.) Կարթեգոնի տրեւէ ետքը՝ Մաւրիտանիոյ ու Նումիտիոյ հետ ծանօթութիւն ունենալու ըսկսան : Յուգուրթ Նումիտիոյ Թագաւոր և Մաւրիտանիոյ Պոկքոս Թագաւորին փեսան էր : Պոկքոս Յուգուրթը Հռոմայեցւոց մատնելուն համար՝ Նումիտիոյ արեւմտեան մասն անոր շնորհուեցաւ, և աս ատենն է որ Մաւրիտանիոյ սահմանը Մալվա գետէն անդին անցաւ : Յուպա Մաւրիտանիոյ ուրիշ Թագաւոր մը Եսապեաներուն ատենը Պոմպէոսի կողմը բռնեց, որուն համար Մաւրիտանիա քիչ մը ժամանակ Հռոմայեցւոց ստացուած համարուեցաւ : Բայց Օգոստոս Մաւրիտանիան նորէն Յուպայի որդւոցը տուաւ, և այսպէս ընիկ Մաւրիտանացի Թագաւորներ մինչև 42 (Մ.Ք.) Թագաւորեցին : 42 ին Սուեանիոս Բաւլինոս Մաւրիտանիոյ Թագաւորութիւնը ջնջելով՝ Հռոմայեցւոց նուաճեց :

2. ՆՈՒՄԻՏԻԱ . Նումիտիա Մաւրիտանիոյ արեւելեան կողմն էր, և կը պարունակէր հիմակուան Գոնսդանդինի գաւառն (Ալժէրի) ու Թուլիսի պէյութեան մէկ մասը : Նումիտիա հին ատենները երկու կը բաժնուէր. արեւմտեան Նումիտիա որ Մասէսիլիա կը կոչուէր, և արեւելեան Նումիտիա որ Մասիլիա կ'ըսուէր. երկուքն ալ իրենց բնիկ Թագաւորներն ունէին : Արեւելեան Նումիտիոյ Թագաւորը, Մասիլիսսա՝ 203 ին (Նխ. ք. զ.Ք.) Նումիտիա միացուց և Կարթեգոնացւոց (որ արեւելքէն Նումիտիոյ սահմանակից էին) երկիրներէն ալ սկսաւ տեղ առնել : Հռոմայեցիք որ Կարթեգոնացւոց հետ պատերազմի մէջ էին և անոնց պղտիկնալը կ'ուզէին, Թոզուզին որ Մասիլիսսա Կարթեգոնացւոց փաստով մեծնայ, մանաւանդ Թէ անոր հետ դաշնակից ալ եղան : Մասիլիսսային որդւոյն Միկիմիսային մեռնելէն ետքը (119) Նումիտիա երկու որդւոցն ու Մասիլիսսային եղբորորդւոյն Յուգուրթին

ԳՐԱՏՈՒՆ

Հրապարակական գրատուններն երկրի մը հասարակաց հրահանգութեանն անհրաժեշտ հարկաւոր, և անոր ուսումնական և դրադիտական յառաջադիմութեանը օգնող միջոցներուն մէկն են : Առանց աղէկ և կանոնաւոր հրապարակական գրատուններու՝ անհնարին է որ ազգ մը շարունակեալ մատենագրութիւն ունենայ : Ինչպէս որ երկիր մը՝ անտեսական մասին՝ անհնարին է որ, առանց ցամաքային և ջրային հազարդակցութեան միջոցներ (ճամբաներ, ջրամուղներ) ունենալու, ծաղկեալ և յառաջագեմ մշակութիւն ու վաճառականութիւն ունենայ : Ազգի մը գրագիտութիւնը որչափ բազմաթիւ և յառաջագեմ երևնայ երբոր հասարակաց գործածութեանը բաց ընտիր գրատուններ չկան, հրատարակուած գործերն հարկաւ թերակատար, և պէտք եղած սնունդէն զուրկ եղած պիտի ըլլան :

Դժբախտութեամբ մեր գտնուած քաղաքն առ միջոցէն զուրկ է : Վերջին տարիներուն մէջ գրածախները Պօլսոյ մէջ աւելցան, որոնք մեղի Եւրոպական ազգաց երևելիներուն արդի գրագիտութեան մեղծանօթ ընելու բաւական դիւրութիւն կուտան : Գրավաճառներն արդարեւ Եւրոպոյ արդի մատենագրական գործերուն տարածվելուն կ'օգնեն, բայց թող որ ասոնք մինակ մասնաւորներու դիրք ստանալու համար դիւրութիւն են, չեն կրնար գրատուններուն ըրածն ընել, որոնք ազգաց ընդհանուր հին և նոր մատենագրութեանը, և ամեն նիւթի վրայ հրատարակուած գործերու մէյմէկ հարուստ մթերանոցներ են, և սովորաբար գործածութեան կամ խորհրդակցութեան համար հասարակութեան մատչելի տեղեր են :

Յայտնի է որ առ մայրաքաղաքիս մէջ՝ Եւրոպոյ ազգաց երևելի քաղաքներուն պէս հրապարակական գրատուններ կազմելու փոյթ տարուած չէ. ոչ ալ ազգն առ բանին մասնաւոր գաղափարն ունեցած և անոր խնամք տարած ունի : Մասնաւորներուն

կը մնար առանձնական գրատուններ ունենալ : Մասնաւորաց գրատունները որչափ հարուստ ըլլան, մատենագրան չեն կրնար ըսուիլ : աւելի հաւաքածոյ են քան թէ գրատուն : Բայց և այնպէս Հայերէն գրոց կատարեալ հաւաքածոյ մը ունեցողներ ազգին մէջ կը գտնուին : Հրապարակական գրատան խորհուրդն յղանալ, և անոր կարեւորութիւնը ճանչնալով, Պօլսոյ մէջ գրատուն մը երևան հանելու սկզբնաւորութիւնն ընելը՝ մեր օրերուն պէս դաղափարներով բեղմնաւոր ժամանակի մը պահուած էր : Մենք առ թերթին մէջ գրապահ մերմագրով յօդուած մը սկսանք, և մեր խորհուրդն ան էր որ Եւրոպայի գրատանց պատմութիւնն ընելէ ետքը՝ յորդոր մը ընենք որ ազգին մէջ գրատան համար յատուկ ընկերութիւն մը կազմուի : Կը յուսայինք թէ հրապարակական գրատան մը, որչափ փոքր ըլլայ, օգուտն ու կարեւորութիւնը յայտնի ըլլալով՝ ասոնկ առաջարկութեան մը գործադրութեանը յօժարամիտ և անձնանուէր ուսումնասիրաց խումբ մը պիտի գտնուէր :

Բարեբախտութեամբ՝ մենք գրատան վրայ մեր յօդուածները չաւարտած՝ ծանօթ եղանք ընկերութեան մը որ արդէն աս նըպատակով կազմուած է, և ազգին մէջ հասարակաց մատենագրանի մը կազմութեանը սկզբնաւորութիւնը կրնէ : Ընկերութիւնը տակաւին ազգին մէջ բիւլերուն ծանօթ է. մենք առ այժմ այսչափ յիշատակութիւն ընելը բաւական համարելով՝ գրատան վրայ մեր յօդուածներն աւարտելէ ետքն՝ ընկերութեան վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւն մը տալու դիտաւորութիւն ունինք :

Ինչպէս տարւոյն ընթացքին մէջ՝ գրատան վրայ մեր յօդուածները պարունակող թիւերն են. Թիւ 13, էջ 121. Թիւ 14, էջ 134. Թիւ 15, էջ 142. Թիւ 18, էջ 177 : Փարիզի ազգային գրատունը 1832 ին 350000 հատոր տպուած գիրք կը պարունակէր. 70, կամ 80000 ձեռագիր մատեան և իբր 50000 կենդանագիր : Բայց առ ալ պէտք է գիտնալ որ 1832 ին Փարիզու ազգային գրատան բովանդակած գիրքերուն վրայ առ տեղեկութիւնը տուողը կը խոս

նեցող աղամանդ մը պարզե տուաւ : Աս դրատան մէջ պահուած է լիվիտի անուանի ձեռագիրը, որն որ հինգերորդ դարուն դրուած կը կարծուի. ոսկի և արծաթի գըրերով գրուած Ս. Մարկոսի և Ղուկասու աւետարաններուն հատակոտորները . և Մեքսիգացի ձեռագիր մը գոյնգոյն նկարներով, որ մարդու մորթի վրայ դրուած, և աննման գործ մը համարուած է : Աս գրատան մէջ կայ նաև նորանշան ձեռագիր մը, զոր Հրէայ մը գրած է, ութը մատնաչափ երկայն և իւր վեց մատնաչափ լայն էջի մը վրայ պարունակել տալով Հռութիւն՝ Գերմաներէն, Ժողովող՝ Եբրայեցերէն, Երգերգոյ՝ Լատիներէն, Եթերն՝ Ասորերէն և Նրկորդ օրէնքը՝ Գաղիերէն, վերջին տողը մինակ 303 գիր կը պարունակէ : Կայսերական գրատունն ամեն օր բաց է, և շատ բազմութիւն հոն կը յաճախէ :

Տրեզուայի գրատունը, խոր քառանկիւն, գրեթէ չորեքկուսի, եօթանասուն դրսի երկու կողմերէն, իսկ միւս երկու կողմերէն՝ յիսուն պատուհանով գեղեցիկ շինուածի մը մէջ է : Իսկ ներսի դիւն ունի տասուերկու տասուերկու պատուհան երկու կողմէն, և եօթն եօթն միւս երկու կողմէն : Գեանայարկը հնութիւններ պահելու համար է, գիրքերն առաջին և երկրորդ յարկերուն մէջ են : Առջե յարկին մէջ երկու խիստ ընդարձակ ճեմոց(կաւի) և տասը սենեակ կան, երկրորդը մէկ ճեմոց և ինը սենեակ կը պարունակէ : Աս գրատան մէջ 1832 ին 150000 հատոր տըպուած, և 5,000 ձեռագիր. մատեան կար : Ձեռագիրներուն մէջ կայ Մեքսիգալէն մատեան մը որ մարդու մորթի վրայ գըրուած է, որուն համար կ'ըսուի թէ օրացոյց մըն է, և ինգաներուն (Մեքսիգոյի թագաւորներուն) պատմութեանը քանի մը հատակոտորներն ունի : Յիշեալ գրատան ձեռագիրներուն մէջ կայ նաև Ղուրանին մէկ գեղեցիկ օրինակը որ Պէյազիտ Բ. ին է . Սաքսոնիացի պաշտօնակալ մը վիէնայի վերջին պաշարման տօները Տաճկի մը ձեռքէն աս ձեռագիրն առած էր : Տպուածներուն մէջ Ալտինի տպագրութիւն 600 կտոր գիրք կայ, մեծ մասը վէլլա-ճի վրայ տպուած : Ինչպէս ըսինք, գրատան տակը,

վարի յարկին տասուերկու սենեակներուն մէջ բազմաթիւ հնութիւններ կը պահուին : Աս թանգարանին տակի ստորերկրեայ յարկին մէջ որ ութսուն կամարաձև սենեակներու բաժնուած է, թէ օտար և եթէ բուն Սաքսոնիա մեծագին յախճապակիներ պահելու սահմանուած է : Սաքսոնիոյ յախճապակչոյն երեւելի ըլլալն արդէն յայտնի է :

Հարուստիւն

ԴԱՍԻՆԵՐԵԿՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներս ազգին մէջ յուզուած քանի մը խնդիրներ, որոնք քիչ շատ ընդարձակ յօդուածներով լուսաւորուելու կարօտ էին, մեր սովորական նիւթերուն շարունակութիւնն արգիւելու պատճառ եղան : Ներկային մէջ յուզուած ազգային խնդիրներու լուսաւորութիւն տուող յօդուածներ թէպէտ մեր նպատակէն դուրս չեն, ուստի և յարկը պահանջած առեն անոնց վրայ ամեն կարելի ըզգուշութեամբ աղատաբար գրել մեր թերթին պարտաւորութիւնն է, բայց ևս աւելի կարեւոր ըստ մեզ, և աս թերթին ալ իբրեւ ուսումնական հանդէս մը՝ առաջին և գլխաւոր նպատակն է չընդհատել ան յօդուածները, որոնք քանի մը լուրջ նիւթերու վրայ դադափար աշու մտօք ըսկաւած և առեն առեն շարունակուած են :

Ըս նիւթերէն մէկն է դաստիարակութիւնը զոր, երկու ճիւղ բաժնելով՝ ընդհանուր դաստիարակութիւն, և նախնական դաստիարակութիւն կամ դպրոցք անուանով, մեր անցած տարուան ընթացքին մէջ 19 յօդուածով շարունակեցինք : Հիմա, որ աս նիւթն առաջ տանելու պիտի սկըսինք, մեր ընթերցողներուն դիւրութեանը համար հոս կ'ուզենք նշանակել ան թիւերն ուէջերը՝ որոնց մէջ յիշեալ նիւթին վրայ խօսուած է : Ասոնք, շարունակեալ նիւթ ըլլալուն համար, մէկէն աչքէ անցընել ուզողներն աս կերպով դիւրաւ գըտնելու կարող կ'ըլլան : Արդ՝ ընդհանուր դաստիարակութեան վրայ մեր տուած յօդուածները կը պարունակուին, թիւ 1,

րենց թշնամիները կ'ուտեն : Ազգերու տիրելու, պատերազմներու և գերութեան աղէտներն մարդկային ցեղերուն մէջ ըսկզբան անհասարութիւն և ստորնուր մը են թաղրելէն յառաջ եկած են : Երբոր Աւետարանին մաքուր սկզբունքները մարդոց հասարակութիւն հաստատելու կ'աշխատին՝ և զանոնք կը յորդորեն իրարու դէմ գլխած ըլլալու երկնաւոր Հօրն օրինակովը՝ որ բարիներուն ու չարերուն հասարակ իր անձրեք կուտայ և իր արեւն անոնց վրայ միօրինակ կը ծագէ, քրիստոնէութեան մէջ տնգամ իրարու սոսիս եղող՝ դրութիւններն ոչ ապաքէն ան պատուէրներուն ազդեցութիւնը կը ջնջեն, երբոր ազայութենէ մարդոց մաքրն մէջ խորունկ կը տպաւորեն իրարու այնպէս նայիլ, ինչպէս որ Աստուծոյ որդիքը՝ անտանային որդւոցը նայիլ կը պարտաւորին : Եւ երբոր լուսաւորութեան սկզբունքները կը ջանան համոզել թէ օրէնքին առջին ամեն մարդ հաւատոր է, քաղաքային վարչութիւնները հարուստին ու աղքատին մէջ ան աստիճան խարութիւն կ'երեցնեն, որպէս թէ երկուքին մէջ բնական և ի ծնէ տարբերութիւն մը եղած ըլլար : Ահա աշխարհիս երկու մեծ ամեծ դրութիւններու, այսինքն քաղաքային և կրօնական դրութեան, ամենէն մեծ թերութիւններէն մէկը որն որ մարդուս կատարեալ բարոյական դաստիարակութիւն առնելուն արգելք են : Ուրիշ շատ արգելքներ ալ տեսնելու համար շատ մանր քննութիւն պէտք չէ : Ներկայ ժամանակիս մէջ շատ լուսաւորեալ սկզբունքներ մեր աշուրները բացած են տեսնելու թիւր և վնասակար սկզբունքներ ուրիշ մարդկային ընկերութիւնը պաշարած եւ դժբախտ ըրած են : Թէպէտ, ինչպէս ըսինք, ընկերութեան ներկայ վիճակը տակաւին այնպէս է որ մարդուս կատարեալ բարոյական դաստիարակութիւն առնելը գրեթէ անկարելի կ'ընեն, բայց և այնպէս հարկ է որ դաստիարակութեան վրայ ամեն կարելի տեսութիւն տրուի, անիկա ամեն կերպով քննութեան, խորհրդածութեան և իմաստասիրութեան նիւթ ըլլայ :

Մարդկային էակը կը թուելու է, անոր համար որ անիկա ազնուանալու պէտք

ունի : Տնկոց և կենդանեայ մշակութիւնը, որոնց հետ մարդս մշակութեան կողմանէ մեծ նմանութիւն ունի, բաւական պատճառ կուտայ մեզի պնդելու թէ, ինչպէս որ ան դործարանաւոր էակաց (տունկերու ու կենդանեայ) մշակութիւնն անոնց անհատները կ'ազնուացնէ, և ազնուացեալ անհատներն են որ զեղին ըսկզբնական վայրենի յատկութիւններէն ազատուելով՝ մշակութեան աւելի ընդունակ սերունդ յառաջ կը բերեն, ասանկ ալ մարդկային էակին սկզբնական վայրագ և անմշակ բնութիւնը դաստիարակելով է որ նոր և աւելի ազնիւ սերունդ յառաջ պիտի բերէ : Հոգադործութեան և անասնաբուծութեան տեղեակ եղողները դիտեն թէ պատուաստն ու զուգաւորութիւնը անկոց և կենդանեայ ազնուութեանը վրայ ինչ մեծ ազդեցութիւն ունին : Միթէ մարդս նոյն բնական օրէնքին ազդեցութեանը տակ կը չէ՞, որ եւ յատկութիւններ, զոր օրինակ հիւանդութիւններ, ակտեր և ուրիշ թերութիւններ մարդուս համար ժառանգական կ'ըլլան. ուրիշ ապէկ յատկութիւններ ինչու համար ժառանգական չըլլան : Բայց առաջ վերջապէս որ մարմնոյ, հոգւոյ և մտաց կարողութիւններն արհեստիւ կը թուելով՝ յաջորդ սերունդներուն մէջ ուշ կամ կանուխ բնական կ'ըլլան : Ասոնց վրայ մեր ընդհանուր դաստիարակութեան յօգուածներուն մէջ, եթէ մեր ընդերցողներն անոնք ուշաթրութեամբ կարգային բաւական ընդարձակ կերպով խօսած ենք, և շարունակութեանը մէջ տակաւին պիտի խօսինք :

Արդ մենք մեր թերթին ընթացքին մէջ դաստիարակութեան ան երկու ճիւղերուն վրայ, այսինքն՝ ընդհանուր և նախնական դաստիարակութեան վրայ խօսելու շարունակելէ զատ, նոր ճիւղ մ'ալ պիտի ձեռք առնենք, այն է՝ մարց դաստիարակութիւնը : Բայց առ նիւթիս վրայ մենք խօսելու տեղ՝ կ'ուզենք խօսել տալ անանկ մէկը որուն մարց դաստիարակութեանը վրայ դրած դործը Գաղիոյ ճեմարանը պսակեց : Ասիկա է մէկ Մարթէն է, որուն յիշեալ դործը՝ Ընդանեայ Ժայռերու դաստիարակութիւնը, իմ Կանանց Յետոյ մարդկային ազգին քաղաքայինութիւնը, կը կոչուի :